# "ԻԴՐԱՄ" ՍՊԸ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

*2023 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ


| | |
|---|---|
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 1 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 2 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 3 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 4 |


## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


| | | |
|---|---|---|
| 1 | Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն | 5 |
| 2 | Պատրաստման հիմունքներ | 6 |
| 3 | Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ | 8 |
| 4 | Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 |
| 5 | Ավանդներ բանկերում | 14 |
| 6 | Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 15 |
| 7 | Ոչ նյութական ակտիվներ | 16 |
| 8 | Շահութահարկ | 16 |
| 9 | Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ | 18 |
| 10 | Կապիտալ և պահուստներ | 18 |
| 11 | Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 19 |
| 12 | Այլ պարտքեր | 19 |
| 13 | Մատուցված ծառայություններից եկամուտ | 20 |
| 14 | Այլ վարչական ծախսեր | 20 |
| 15 | Ֆինանսական եկամուտ և ծախսեր | 20 |
| 16 | Ակնկալվող պարտքային կորուստների գծով (հակադարձում)/կորուստ | 20 |
| 17 | Արտարժութային գործառնություններից եկամուտ, զուտ | 21 |
| 18 | Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ | 21 |
| 19 | Ֆինանսական ռիսկերի կառավարում | 21 |
| 20 | Պայմանականություններ | 26 |
| 21 | Կապակցված կողմեր | 27 |
| 22 | Կապիտալի համարժեքություն | 28 |

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
Vazgen Sargsyan St., 2 Building,
Yerevan, 0010 Armenia,
Kamar Business Center
Tel: +374 60 50 7777
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետերերին

## *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և իր դուստր ընկերությունների (այսուհետ՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Այլ հանգամանք***

Խմբի 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2023թ. հունիսի 15-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

***Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

***Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Դմիտրո Յուրգելևիչ

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

28 հունիսի, 2024 թ.

## Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| *Հազար դրամ* | Ծան. | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. (վերաներկայացված, ծան 2) |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4 | 16,781,018 | 15,043,508 |
| Ավանդներ բանկերում | 5 | 1,540,283 | 118,968 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ | 9 | 1,468,797 | 1,281,689 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 78,076 | 168,147 |
| Հիմնական միջոցներ | 6 | 385,040 | 400,933 |
| Ոչ նյութական ակտիվներ | 7 | 794,909 | 702,908 |
| Գուդվիլ | | 184,285 | 184,285 |
| Այլ ակտիվներ | | 2,590 | - |
| **Ընդամենը ակտիվներ** | | **21,234,998** | **17,900,438** |
| | | | |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Վարկեր բանկերից | | - | 487,192 |
| Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով | | 2,067,195 | 1,665,592 |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 11 | 7,110,597 | 7,937,546 |
| Այլ պարտքեր | 12 | 620,663 | 1,559,590 |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | | 584,166 | 930,403 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **10,382,621** | **12,580,323** |
| | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10 | 480,850 | 365,446 |
| Լրացուցիչ վճարված կապիտալ | 10 | 6,890,936 | 6,340 |
| Կուտակված շահույթ | | 3,461,631 | 4,739,899 |
| Արտարժույթի փոխարկման պահուստ | | (131,264) | (68,728) |
| **Մայր ընկերության մասնակիցներին բաժին ընկնող սեփական կապիտալ** | | **10,702,153** | **5,042,957** |
| Չվերահսկվող բաժնեմաս | | 150,224 | 277,158 |
| **Ընդամենը կապիտալ** | | **10,852,377** | **5,320,115** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **21,234,998** | **17,900,438** |

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ղեկավարության կողմից և ստորագրվել 2024 թ. հունիսի 28-ին:

Արսեն Քդենյան
Տնօրեն

Մարիամ Հակոբյան
Ֆինանսական տնօրեն

*Կից 1-22 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| *Հազար դրամ* | Ծան. | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| Մատուցված ծառայություններից հասույթ | 13 | 10,056,350 | 10,631,483 |
| Կոմիսիոն վճարների տեսքով ծախսեր | | (2,657,069) | (1,921,494) |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (1,846,761) | (1,667,268) |
| Վճարահաշվարկային սարքավորումների սպասարկման ծախսեր | | (395,438) | (321,823) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 6, 7 | (192,088) | (152,404) |
| Վարչական այլ ծախսեր | 14 | (1,310,170) | (1,052,828) |
| **Գործառնական շահույթ** | | **3,654,824** | **5,515,666** |
| Այլ եկամուտ | | 180 | 19,315 |
| Ֆինանսական եկամուտ | 15 | 496,529 | 293,027 |
| Ֆինանսական ծախսեր | 15 | (34,617) | (111,871) |
| Այլ ոչ գործառնական ծախսեր, զուտ | | – | (20,355) |
| Ակնկալվող պարտքային կորուստի գծով հակադարձում/(ծախս) | 16 | 8,739 | (23,231) |
| Արտարժութային գործառնություններից եկամուտ, զուտ | 17 | 328,531 | 293,885 |
| **Շահույթ մինչև հարկումը** | | **4,454,186** | **5,966,436** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (915,605) | (1,083,295) |
| **Տարվա շահույթ** | | **3,538,581** | **4,883,141** |
| | | | |
| **Տարվա շահույթի բաշխում** | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | 16,849 | 15,093 |
| Մայր ընկերության մասնակիցներ | | 3,521,732 | 4,868,048 |
| | | | |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | |
| *Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին* | | | |
| Արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերություններ | | (83,381) | (94,171) |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | | (83,381) | (94,171) |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **3,455,200** | **4,788,970** |
| | | | |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի բաշխում** | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | (3,996) | (8,450) |
| Մայր ընկերության մասնակիցներ | | 3,459,196 | 4,797,420 |

*Կից 1-22 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| *Հազար դրամ* | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ վճարված կապիտալ | Կուտակված շահույթ (փոփոխած) | Արտարժույթիփոխարկման պահուստ | Սեփական կապիտալ՝ Մայր ընկերության մասնակիցներ (փոփոխած) | Չվերահսկվող բաժնեմաս (փոփոխած) | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (չփոփոխած)** | **365,446** | **6,340** | **3,305,157** | **1,900** | **3,678,843** | **66,502** | **3,745,345** |
| Փոփոխում | – | – | (233,306) | – | **(233,306)** | 233,306 | – |
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ (փոփոխած)** | **365,446** | **6,340** | **3,071,851** | **1,900** | **3,445,537** | **299,808** | **3,745,345** |
| Տարվա շահույթ | – | – | 4,868,048 | – | **4,868,048** | 15,093 | **4,883,141** |
| Այլ համապարփակ վնաս | – | – | – | (70,628) | **(70,628)** | (23,543) | **(94,171)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **–** | **–** | **4,868,048** | **(70,628)** | **4,797,420** | **(8,450)** | **4,788,970** |
| Կապիտալ ներդրում | – | – | – | – | **–** | 28,350 | **28,350** |
| Շահաբաժիններ (ծան 10) | – | – | (3,200,000) | – | **(3,200,000)** | (42,550) | **(3,242,550)** |
| **Սեփականատերերի հետ գործարքներ** | – | – | (3,200,000) | – | **(3,200,000)** | (14,200) | **(3,214,200)** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (փոփոխած)** | **365,446** | **6,340** | **4,739,899** | **(68,728)** | **5,042,957** | **277,158** | **5,320,115** |
| Տարվա շահույթ | – | – | 3,521,732 | – | **3,521,732** | 16,849 | **3,538,581** |
| Այլ համապարփակ վնաս | – | – | – | (62,536) | **(62,536)** | (20,845) | **(83,381)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | – | – | **3,521,732** | **(62,536)** | **3,459,196** | **(3,996)** | **3,455,200** |
| Կապիտալ ներդրում (ծան 10) | 115,404 | 6,884,596 | – | – | **7,000,000** | – | **7,000,000** |
| Շահաբաժիններ (ծան 10) | – | – | (4,800,000) | – | **(4,800,000)** | (122,938) | **(4,922,938)** |
| **Սեփականատերերի հետ գործարքներ** | 115,404 | 6,884,596 | **(4,800,000)** | – | **2,200,000** | **(122,938)** | **2,077,062** |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **480,850** | **6,890,936** | **3,461,631** | **(131,264)** | **10,702,153** | **150,224** | **10,852,377** |

*Կից 1-22 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | Ծան | 2023թ. | 2022թ. (վերադասա-կարգված) |
|---|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | | |
| **Շահույթ մինչև հարկումը** | | **4,454,186** | **5,966,436** |
| Ճշգրտումներ՝ | | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | 192,088 | 152,404 |
| Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից զուտ վնաս/(օգուտ) | | – | 17,561 |
| Ֆինանսական եկամուտ | | (496,529) | (293,027) |
| Ֆինանսական ծախսեր | | 36,341 | 117,204 |
| Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս/(օգուտ) | | 104,030 | (4,316) |
| Ակնկալվող պարտքային կորուստի գծով (հակադարձում)/ծախս | | (8,739) | (9,864) |
| **Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները** | | **4,281,377** | **5,946,398** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | | (208,580) | 21,513 |
| Հաճախորդներին էլեկտրոնային փողի գծով պարտքերի փոփոխություն | | 401,603 | (221,352) |
| Վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերի փոփոխություն | | (797,616) | 315,339 |
| Այլ պարտքերի փոփոխություն | | 135,138 | 1,422,147 |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | | **3,811,922** | **7,484,045** |
| Վճարված շահութահարկ | | (1,189,287) | (886,512) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | | **2,622,635** | **6,597,533** |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (335,711) | (466,055) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | – | 27,741 |
| Ավանդներ տեղադրում | | (1,490,293) | – |
| Ավանդների մարում | | 105,181 | 67,635 |
| Ստացված տոկոսներ | | 465,464 | 292,090 |
| Փոխառության տրամադրում կապակցված կողմին | | – | (2,000,000) |
| Փոխառության մարում կապակցված կողմից | | – | 2,000,000 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(1,255,359)** | **(78,589)** |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | | |
| Վարկերի ստացում | 19 | – | 299,955 |
| Վարկերի մարում | 19 | (487,192) | (707,349) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | (13,728) | (48,704) |
| Լրացուցիչ կապիտալի ներդրում | 10 | 7,000,000 | 28,350 |
| Շահաբաժինների վճարում | 19 | (5,985,000) | (2,142,550) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված/(Ֆինանսավորման գործունեությունից ստացված) զուտ դրամական միջոցներ** | | **514,080** | **(2,570,298)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **1,881,356** | **3,948,646** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում | | 15,043,508 | 11,191,194 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (134,808) | (74,945) |
| Դրամական միջոցների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 26,519 | 12,354 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (35,557) | (33,741) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում (ծան 4)** | | **16,781,018** | **15,043,508** |

*Կից 1-22 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Մայր Ընկերություն) հիմնադրվել է 2008թ. փետրվարի 8-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

Մայր Ընկերությունը հանդիսանում է «ԻԴՐԱՄ» վճարային համակարգի օպերատորը: Մայր Ընկերությունը 2009թ. դեկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացել է դրամական փոխանցումներ իրականացնելու լիցենզիա, իսկ 2016թ. մարտի 31-ից ստացել է նաև վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա:

Մայր Ընկերությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից 2012 թվականին առաջինը Հայաստանի Հանրապետությում ստացել է էլեկտրոնային փող թողարկելու թույլատվություն:

Մայր Ընկերության գործունեության առաջնային նպատակներն են. տարածել և խրախուսել էլեկտրոնային փողի լայն կիրառումը՝ նպաստելով էլեկտրոնային առևտրի զարգացմանը Հայաստանում, հնարավորություն ընձեռել հաճախորդներին առցանց ռեժիմով կատարել բազմատեսակ վճարումներ՝ ստեղծելով հարմարավետ և լայն կիրառություն ունեցող վճարման գործիք, կատարելագործել դրամական փոխանցումների հնարավորությունները:

Մայր Ընկերությունը մատուցում է հետևյալ վճարահաշվարկային ծառայությունները՝

- Կոմունալ և բջջային վճարումների ընդունում
- Ինտերնետային ծառայության վճարումների ընդունում
- Ֆինանսական կազմակերպությունների վարկերի տրամադրումներ վերջիններիս հաճախորդներին և դրանց գծով կատարվող մարումների ընդունում
- Առցանց և օֆլայն խանութներից կատարվող առևտրի դիմաց վճարումների ընդունում
- Առցանց խաղադրույքների վճարումների ընդունում
- Հարկերի և տուրքերի վճարումների ընդունում
- Դրամական փոխանցումների իրականացում և այլ վճարահաշվարկային ծառայությունների մատուցում և այլն:

Մայր Ընկերության գրանցման հասցեն և գլխամասն է. ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փող. 48/1:

2019 թվականին Մայր Ընկերությունը ձեռք է բերել տերմինալների սպասարկում իրականացնող «Իդրամ տերմինալս» ՍՊԸ-ի 50.05% բաժնեմասը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ անվանումը «Ալֆա Ինվեստ» ՍՊԸ):

2020 թվականին Մայր Ընկերությունը ձեռք է բերել համակարգիչների ծրագրային ապահովման մշակում իրականացնող «ՈԻնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ-ի 75% բաժնեմասը:

Այս գործարքների հետևանքով ստեղծվեց Խումբ, որն ընդգրկում է Մայր Ընկերությունը և իր երկու դուստր ընկերությունները՝ «Իդրամ Տերմինալս» ՍՊԸ և «ՈԻնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ:

### Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ «ՈԻնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ-ի, որն իր գործունեությունն իրականացնում է Ռուսաստանում: Այնուամենայնիվ, Խմբի գործունեության վրա հիմնականում ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և ֆիսկալ խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ են ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

*(հազար ՀՀ դրամ)*

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն (շարունակություն)

### Հայաստանի գործարար միջավայրը (շարունակություն)

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից են:

Պատերազմի արդյունքում տեղի է ունեցել ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք Հայաստան, նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական միջոցների ներհոսքի և պլաստիկ քարտերով գործարքների աճի: Խմբի ղեկավարությունը հետևում է տնտեսական իրավիճակին ընթացիկ պայմաններում: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է ունենալ Խմբի գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2 Պատրաստման հիմունքներ

### ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

### բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հաշվեգրման մեթոդի և սկզբնական արժեքի հիմունքով:

### գ) Գործառնական և ներկայացման արժույթ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (դրամ), որն էլ հանդիսանում է Մայր Ընկերության գործառնական արժույթը: Հայաստանի Հանրապետությունում գործող դուստր ընկերություն «Իդրամ Տերմինալս» ՍՊԸ-ի գործառնական արժույթը հայկական դրամն է (դրամ): Ռուսաստանի Դաշնությունում գործող դուստր ընկերություն «ՈՒնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ-ի գործառնական արժույթը ռուսական ռուբլին է (ռուբլի):

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 2 Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### դ) Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծան. 18-ում:

Չնայած գնահատումները հիմնված են ղեկավարության կողմից ներկա իրադարձությունների և գործողությունների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, իրական արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից և ի սկզբանե կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

### ե) Նախորդ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների փոփոխումներ

2023 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը որոշակի փոփոխություններ է կատարել 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համեմատական ֆինանսական տեղեկատվության մեջ՝ հաշվի առնելով ներկայացման և սխալների ուղղման փոփոխությունները, ինչպես ներկայացված է ստորև.

1) Խումբը հայտնաբերել է սխալ զուտ ակտիվների մասնաբաժնի հաշվարկում, որը վերագրվում է իր դուստր ընկերություններից մեկի հետ կապված չվերահսկող բաժնեմասերին 2022 թվականի հունվարի 1-ի և 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2) Խումբը որոշել է առանձին ներկայացնել հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով պարտքերը և վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերը, որոնք նախկինում ներկայացված էին առևտրային կրեդիտորական պարտքերում:

Փոփոխությունների ազդեցությունը ֆինանսական վիճակի համախմբված հաշվետվության վրա 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022 թվականի հունվարի 1-ը ներկայացված է ստորև:

| 31 դեկտեմբերի 2022 | *Նախկինում ներկայացված* | *Փոփոխում* | *Վերադասակ արգում* | *Փոփոխած* |
|---|---|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 9,621,442 | – | (9,621,442) | – |
| Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով | – | – | 1,665,592 | 1,665,592 |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | – | – | 7,937,546 | 7,937,546 |
| Այլ պարտքեր | 1,541,286 | – | 18,304 | 1,559,590 |
| Կուտակված շահույթ | 4,973,205 | (233,306) | – | 4,739,899 |
| **Մայր ընկերության մասնակիցներին բաժին ընկնող սեփական կապիտալ** | **5,276,263** | **(233,306)** | **–** | **5,042,957** |
| Չվերահսկվող բաժնեմաս | 43,852 | 233,306 | – | 277,158 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 2 Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### ե) Նախորդ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների փոփոխումներ (շարունակություն)

| 1 հունվարի 2022 | *Նախկինում ներկայացված* | *Փոփոխում* | *Վերադասակ արգում* | *Փոփոխած* |
|---|---|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 8,418,497 | – | (8,418,497) | – |
| Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով | – | – | 1,886,944 | 1,886,944 |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | – | – | 6,490,718 | 6,490,718 |
| Այլ պարտքեր | 213,439 | – | 40,835 | 254,274 |
| Կուտակված շահույթ | 3,305,157 | (233,306) | – | 3,071,851 |
| **Մայր ընկերության մասնակիցներին բաժին ընկնող սեփական կապիտալ** | **3,678,843** | **(233,306)** | **–** | **3,445,537** |
| Չվերահսկվող բաժնեմաս | 66,502 | 233,306 | – | 299,808 |

Այս փոփոխությունները չեն ազդում ընդհանուր համախմբված շահույթի կամ սեփական կապիտալի վրա, ինչպես նախկինում ներկայացվել է: Դրամական միջոցների հոսքերի համեմատական համախմբված հաշվետվության ներկայացումը և բացատրական ծանոթագրությունները համապատասխանաբար փոփոխվել են:

### զ) Դուստր ընկերություններ

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

| Դուստր ընկերություն | Իդրամի մասնաբաժին % | Չվերահսկվող բաժնեմասի մասնաբաժին | Գործունեության երկիր | Գործունեությունը սկսելու ամսաթիվ | Գործունեության ոլորտ | Ձեռքբերման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|
| "Իդրամ տերմինալս" ՍՊԸ* | 50.05% | 49.95% | Հայաստանի Հանրապետություն | 27.12.2012 | Ծառայությունների մատուցում | 18.11.2019 |
| «ՈՒնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ | 75% | 25% | Ռուսաստանի Դաշնություն | 06.04.2020 | Ծառայությունների մատուցում | 06.04.2020 |

* *ընկերությունը վերանվանվել է “Ալֆա Ինվեստ” ՍՊԸ-ից “Իդրամ տերմինալս” ՍՊԸ-ի 2023 թվականին:*

«Իդրամ տերմինալս» ՍՊԸ-ի գործունեության հիմնական վայրը Հայաստանի Հանրապետությունն է: «ՈՒնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ-ի գործունեության հիմնական վայրը Ռուսաստանի Դաշնությունն է:

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ

### ա) Համախմբման հիմունքները

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Մայր Ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

### ա) Համախմբման հիմունքները (շարունակություն)

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկվող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով: Գործող դուստր ընկերություններում չվերահսկվող բաժնետոմսերի փոփոխությունից առաջացող օգուտները կամ վնասները ճանաչվում են չբաշխված շահույթում:

### բ) Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը.

| | 31 դեկտեմբերի 2023 թ. | 31 դեկտեմբերի 2022 թ. |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 404.79 | 393.57 |
| ՀՀ դրամ/1 եվրո | 447.9 | 420.06 |
| ՀՀ դրամ/1 ռուբլի | 4.5 | 5.59 |

*Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումն այլ արժույթով*

Խմբի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են ռուբլուց դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են դրամով՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը, մինչդեռ սեփական կապիտալի հաշիվները վերահաշվարկվում են կիրառելով պատմական փոխարժեքները, որոնք գործում էին գործարքի օրվա դրությամբ: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և ներկայացվում է սեփական կապիտալում՝ արտարժույթի փոխարկման պահուստում:

### գ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին (չավարտված գործարքներ) և սեփական տերմինալներում:

Չավարտված գործարքները ներկայացնում են այն գումարները, որոնք Խումբը կստանա առևտրային բանկերից ծագման պահից 1-3 աշխատանքային օրվա ընթացքում, հիմնականում Խմբի հաճախորդների կողմից բանկային քարտերից էլեկտրոնային դրամապանակների համալրման արդյունքում և արտացոլված են որպես Խմբի դրամական միջոցները ճանապարհին (չավարտված գործարքներ) և վերածվում են առևտրային բանկերում դրամական միջոցների: Ղեկավարությունը (կիրառելով դատողություն) դրամական միջոցները ճանապարհին (չավարտված գործարքներ) համարում է որպես բարձր իրացվելի կարճաժամկետ ֆինանսական ակտիվներ, որոնք հեշտությամբ փոխարկվում են դրամական միջոցների, և դասակարգում դրանք որպես դրամական միջոցների համարժեք դրամական միջոցների հոսքերի համախմբված հաշվետվությունում:

### դ) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

### դ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Հետագայում Խմբի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով:

***Ֆինանսական ակտիվների արժեզրկումը***

Խումբը իր ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստներ: Պարտքային կորուստների սեփական պատմական տվյալների բացակայության պատճառով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են միջազգային վարկանշային գործակալությունների դեֆոլտի և վերականգնման վիճակագրության տվյալների հիման վրա:

Խմբի ֆինանսական պարտավորությունները (բացառությամբ վարձակալության պարտավորությունների) չափվում են ամորտիզացված արժեքով:

### ե) Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով

Վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերը հիմնականում առաջանում են Խմբի հաճախորդների կողմից տերմինալների և առցանց համակարգի միջոցով իրականացվող վճարային գործարքներից, որոնք այնուհետև հավաքագրվում են Խմբի կողմից և փոխանցվում վերջնական հասցեատերերին միջինը 1-3 աշխատանքային օրվա ընթացքում (սակայն կարող են տարբեր լինել՝ համաձայն որոշ գործընկերների հետ պայմանագրերի): Հավաքագրված վճարումները փոխանցվում են գործընկեր ընկերություններին՝ նրանց հետ կնքված պայմանագրերի պայմաններին համապատասխան:

### զ) Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով

Հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով պարտքերը ներկայացնում են հաճախորդների միջոցները՝ Խմբում բացված իրենց էլեկտրոնային դրամապանակներում: Այդ դրամապանակների մեկ միավորը հավասար է մեկ հայկական դրամի: Այս պարտքերը առաջանում են այն ժամանակ, երբ ֆիզիկական անձինք համալրում են իրենց էլեկտրոնային դրամապանակները և մարվում են, երբ դրամապանակների սեփականատերերը կատարում են փոխանցումներ կամ վճարումներ: Հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով պարտքերը կարճաժամկետ ֆինանսական պարտավորություններ են, քանի որ հաճախորդները ցանկացած պահի կարող են միջոցներ հանել էլեկտրոնային դրամապանակներից՝ առանց նախնական հաստատման կամ այլ սահմանափակումների: Հաճախորդները չեն կարող կանխիկ գումար հանել էլեկտրոնային դրամապանակներից, սակայն հնարավոր է այդ միջոցները փոխանցել այլ բանկային քարտերի: Մեկ հաճախորդը ցանկացած պահի իր էլեկտրոնային դրամապանակում կարող է պահել 1,000 հազար դրամ սահմանաչափով գումար:

### է) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Մաշվածությունը ծախսագրվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են՝

Համակարգիչներ և հաղորդակցության միջոցներ – 1-10 տարի

Գրասենյակային գույք և սարքավորումներ - 1-10 տարի

Վարձակալված տարածքի բարելավումներ – 3 տարի կամ վարձակալական ժամկետը, եթե ավելի կարճ է:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

### ը) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Խմբի ոչ նյութական ակտիվները, հիմնականում, բաղկացած են համակարգչային ծրագրերից, ծրագրերի օգտագործման լիցենզիաներից և այլն: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-10 տարի համակարգչային ծրագրերի, լիցենզիաների և այլ ոչ նյութական ակտիվների համար:

### թ) Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Խմբի մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը:

Լրացուցիչ վճարված կապիտալը բաժնեմասի համար կատարված վճարման և կանոնադրական կապիտալում բաժնեմասի անվանական արժեքի տարբերությունն է:

Արտարժույթի փոխարկման պահուստը ներառում է Խմբում ընդգրկված արտերկրյա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները դրամով վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները: Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հայտարարվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ:

### ժ) Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկվող շահույթի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կլինի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

### ի) Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում վճարահաշվարկային ծառայությունների մատուցումից և ստացվում է և ֆիզիկական, և իրավաբանական անձանց կողմից՝ կախված գործարքի բնույթից և գործընկերների հետ պայմանագրերից: Հասույթը ճանաչվում է ինչպես տերմինալների, այնպես էլ առցանց հարթակի միջոցով կատարված վճարումների և փոխանցումների ապահովման համար:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

### ի) Հասույթ (շարունակություն)

Ե՛վ տերմինալների, և՛ առցանց գործարքների համար (վճարումներ, փոխանցումներ քարտերին և այլն), ֆիզիկական անձ հաճախորդների հետ գործարքներից ստացված հասույթը ճանաչվում է ֆիզիկական անձանց կողմից նախաձեռնված վճարման կամ փոխանցման գործարքի ժամանակ, որը իրականացվում է Խմբի կողմից: Վճարը որոշվում է համաձայն նախապես որոշված սակագների (որոնք սովորաբար ներկայացնում են ֆիքսված գումարներ մեկ գործարքի համար կամ ֆիքսված դրույքաչափ, որը կիրառվում է գործարքի գումարի նկատմամբ):

Ֆիզիկական անձանցից վճարները սովորաբար վերածվում են դրամական միջոցների 1-3 աշխատանքային օրվա ընթացքում:

Իրավաբանական անձանց հետ գործարքների ժամանակ (տերմինալով կամ առցանց վճարումներ, QR վճարումներ) իրավաբանական անձանցից ստացվող հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով պայմանագրով նախապես որոշված սակագները՝ ֆիզիկական անձանց կողմից համապատասխան իրավաբանական անձանց փոխանցումների ամսական շրջանառության վրա, ինչպես տերմինալների, այնպես էլ առցանց հարթակի միջոցով: Իրավաբանական անձանցից ստացված եկամուտը սովորաբար վերածվում է դրամական միջոցների, երբ ամսական հաշիվները թողարկվում և վճարվում են գործընկեր իրավաբանական անձանց հետ պայմանագրերի հիման վրա հաշիվների թողարկումից հետո մոտավորապես 10 օրվա ընթացքում: Իրավաբանական անձանց հետ գործարքներից հասույթը ճանաչվում է նրանց վերագրվող հասույթի ձևավորման ժամանակ:

### լ) Գուդվիլ

Գուդվիլը ճանաչվել է «Իդրամ Տերմինալս» ՍՊԸ-ում բաժնեմասը ձեռք բերելու ժամանակ: Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը տարեկան կտրվածքով իրականացնում է գուդվիլի հետ կապված դրամաստեղծ միավորների արժեզրկման ստուգում, կամ ավելի հաճախ, եթե կա հայտանիշ, որ գուդվիլն արժեզրկված է:

Խումբը որոշել է, որ այն ներկայացնում է մեկ դրամաստեղծ միավոր՝ գուդվիլի արժեզրկման ստուգման նպատակով, քանի որ Խումբն ամբողջությամբ օգուտ է քաղում ձեռնարկատիրական գործունեության միավորման սիներգիաներից: Գնահատման մոդելը, որն օգտագործվում է գուդվիլի արժեզրկման փորձարկման համար, օգտագործման արժեքի մոդելն է: Մանրամասների համար տես ծանոթագրություն 18:

### խ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Խումբն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ): Խումբը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել: Բացառությամբ սույն ծանոթագրության մեջ բացահայտված Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների, այլ ստանդարտներ կամ փոփոխություններ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

*Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում*

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

### խ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Այս փոփոխությունները ազդեցություն են ունեցել Խմբի՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա, բայց ոչ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցանկացած միավորի չափման, ճանաչման կամ ներկայացման վրա:

*Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*

Քանի որ Խումբը իր գործունեությունը ծավալում է Հայաստանում և Ռուսաստանում, որոնք չեն հանդիսանում ՏՀՁԿ երկրներ, ապա Մոտեցում II կանոնների պահանջները կիրառելի չեն: Հետևաբար, քանի որ Մոտեցում II կանոնների գծով բացահայտումներ չեն պահանջվում, այս փոփոխությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունենա:

*ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր*

*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում*

### ծ) Դեռևս չգործող, սակայն հրապարակված ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Խումբը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չեն ունենա:

- *ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառք և հետադարձ վարձակալության գործարքներում*
- *Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ*
- *Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում*

## 4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| Դրամական միջոցներ դրամարկղում | 702 | 3,045 |
| Դրամական միջոցներ առևտրային բանկերում | 13,135,447 | 13,073,825 |
| BB- -ից BB+ վարկանիշով | 215,723 | 5,051 |
| B- -ից B+ վարկանիշով | 12,562,346 | 12,455,621 |
| չվարկանշված | 357,378 | 613,153 |
| Դրամական միջոցներ տերմինալներում | 985,467 | 536,316 |
| Չավարտված գործարքներ՝ առևտրային բանկերից | 2,661,611 | 1,365,578 |
| Ցպահանջ ավանդ | – | 93,472 |
| **Ընդամենը** | **16,783,227** | **15,072,236** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ | (2,209) | (28,728) |
| **Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **16,781,018** | **15,043,508** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 12,122,534 հազար դրամ գումարով հաշիվները կենտրոնացված են մեկ կապակցված կողմ բանկում, ինչն իրենից ներկայացնում է էական կենտրոնացում (2022թ. 12,291,387 հազար դրամ, երկու բանկում):

Վարկանիշները հիմնված են Standard & Poor's (S&P) վարկանիշային համակարգի վրա, և եթե գործընկեր բանկը չունի S&P վարկանիշ, բայց ունի վարկանիշ Moody's և Fitch գործակալություններում, ապա այդ վարկանիշերը փոխարկվում են S&P-ի վարկանիշի՝ համաձայն փոխարկման աղյուսակների:

Չավարտված գործարքներն առևտրային բանկերից իրենցից ներկայացնում են Խմբի հաճախորդների կողմից տերմինալների միջոցով և էլեկտրոնային հարթակներով իրականացված գործարքները, որոնց գծով վճարումները Խումբը ստանում է 1-3 բանկային օրվա ընթացքում: Տես ծան. 3:

## 5 Ավանդներ բանկերում

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| Ավանդներ առևտրային բանկերում | | |
| B- -ից B+ վարկանիշով | 1,540,497 | 119,792 |
| ԱՊԿ պահուստ | (214) | (824) |
| **Ընդամենը ավանդներ բանկերում** | **1,540,283** | **118,968** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդները ներդրված են մեկ կապակցված կողմ բանկում (2022թ.՝ մեկ բանկում), ինչը ներկայացնում է էական կենտրոնացում: Ավանդների պայմանագրային մարման ժամկետն է 2024-2025 թթ. (2022թ.: 2023-2025): Խումբն, ըստ ավանդային պայմանագրերի, իրավունք ունի ժամկետի ավարտից շուտ ետ ստանալ ավանդները՝ 10 օր առաջ բանկին համապատասխան դիմում ներկայացնելու և ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսները ցպահանջ ավանդների տոկոսադրույքով վերահաշվարկվելու պայմանով:

Ավանդները ներդրված են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով (2022թ.՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով ներդրված ավանդների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.25% (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8.12%) և ԱՄՆ դոլարով ներդրված ավանդների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 2.95% (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3.75%):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված ավանդներ առկա չեն: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 20,000 հազար ՀՀ դրամի ավանդ գրավադրված է եղել բանկից ստացված 1 երաշխիքի դիմաց, որը մարվել է 2023թ. դեկտեմբերին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 6 Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

| *Հազար դրամ* | Համակարգ-չային և այլ տեխնիկա | Գրասենյա-կային գույք և այլ | Կապիտալ ներդրումներ վարձակալած հիմնական միջոցներում | Այլ | Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ * | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | |
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | **317,040** | **25,096** | **6,483** | **15,264** | **129,366** | **493,249** |
| Ավելացումներ | 144,807 | 28,197 | 64,067 | 10,837 | – | **247,908** |
| Օտարում/դուրս-գրում | (17,073) | – | – | (2,095) | (91,765) | **(110,933)** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **444,774** | **53,293** | **70,550** | **24,006** | **37,601** | **630,224** |
| Ավելացումներ | 84,496 | 7,779 | 4,922 | 1,337 | – | 98,534 |
| Վերադասակար-գում ոչ ընթացիկ կանխավճարների | – | – | – | (13,789) | – | (13,789) |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **529,270** | **61,072** | **75,472** | **11,554** | **37,601** | **714,969** |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | |
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | **125,812** | **16,595** | **4,323** | **776** | **92,791** | **240,297** |
| Տարվա ծախս | 43,348 | 8,213 | 16,659 | 710 | 13,436 | 82,366 |
| Օտարում/դուրս-գրում | (1,453) | – | – | (154) | (91,765) | (93,372) |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **167,707** | **24,808** | **20,982** | **1,332** | **14,462** | **229,291** |
| Տարվա ծախս | 55,298 | 11,720 | 21,243 | 814 | 11,563 | 100,638 |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **223,005** | **36,528** | **42,225** | **2,146** | **26,025** | **329,929** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **277,067** | **28,485** | **49,568** | **22,674** | **23,139** | **400,933** |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **306,265** | **24,544** | **33,247** | **9,408** | **11,576** | **385,040** |

* *Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել են շենքի գծով:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 7 Ոչ նյութական ակտիվներ

| *Հազար դրամ* | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ և այլն | Ընդամենը |
|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | |
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | **816,262** | **32,561** | **848,823** |
| Ավելացումներ | 186,358 | 4,048 | 190,406 |
| Արտարժույթի վերահաշվարկման զուտ տարբերություն | (60,851) | – | (60,851) |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **941,769** | **36,609** | **978,378** |
| Ավելացումներ | 226,466 | 10,711 | 237,177 |
| Արտարժույթի վերահաշվարկման *զուտ* տարբերություն | (81,391) | – | (81,391) |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,086,844** | **47,320** | **1,134,164** |
| *Կուտակված ամորտիզացիա* | | | |
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | **188,472** | **29,094** | **217,566** |
| Տարվա ծախս | 65,953 | 4,085 | 70,038 |
| Արտարժույթի վերահաշվարկման զուտ տարբերություն | (12,134) | – | (12,134) |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **242,291** | **33,179** | **275,470** |
| Տարվա ծախս | 76,620 | 8,101 | 84,721 |
| Արտարժույթի վերահաշվարկման *զուտ* տարբերություն | (20,936) | – | (20,936) |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **297,975** | **41,280** | **339,255** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **699,478** | **3,430** | **702,908** |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **788,869** | **6,040** | **794,909** |

## 8 Շահութահարկ

| *Հազար դրամ* | **2023** | **2022** |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 843,050 | 1,170,402 |
| Հետաձգված հարկ | 72,555 | (87,107) |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **915,605** | **1,083,295** |

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի համար շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ.՝ 18%): Խմբի դուստր ընկերություններից մեկը գրանցված է Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ) և հանդիսանում է ՌԴ հարկ վճարող, որտեղ շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%: ՀՀ, ՌԴ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև:

Արդյունավետ շահութահարկի համադրումը ներկայացված է ստորև.

*(հազար ՀՀ դրամ)*

## 8 Շահութահարկ (շարունակություն)

| *Հազար դրամ* | 2023 | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2022 | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ նախքան հարկումը | 4,454,186 | | 5,966,436 | |
| Շահութահարկ 18% դրույքաչափով | 801,753 | 18.00 | 1,073,959 | 18.00 |
| Չնվազեցվող ծախսեր | 7,342 | 0.16 | 9,918 | 0.17 |
| Արտարժույթի փոխարժեքի տարբերություններ | 18,726 | 0.42 | (1,418) | (0.02) |
| Հետաձգված հարկային ակտիվի դուրսգրում * | 87,784 | 1.97 | | |
| Նախորդ տարվա ընթացիկ հարկի ճշգրտումներ, որոնք ճանաչվել են ընթացիկ տարում | | | 836 | 0.01 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **915,605** | **20.56** | **1,083,295** | **18.16** |

* 2023 թվականին հետաձգված հարկային ակտիվի դուրսգրումը վերաբերում է ռուսական դուստր «ՈՒնիվերսալնըյե Պլատեժնըյե Տեխնոլոգիի» ՍՊԸ-ին, որը 10 տարով դարձել է Ռուսաստանի բարձր տեխնոլոգիական բիզնես տարածք Սկոլկովոյի ռեզիդենտ, ինչը հանգեցրել է այդ ժամանակահատվածի համար շահութահարկի վճարումից ազատմանը: Արդյունքում, Խումբը եզրակացրել է, որ տեսանելի ապագայում չի լինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել դրա հետ կապված ժամանակավոր տարբերությունները, և որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող բոլոր էական ժամանակավոր տարբերությունները կվերադարձվեն այն ժամանակաշրջաններում, երբ դուստր կազմակերպությունը չի լինի ենթակա շահութահարկի: Այսպիսով, ռուսական դուստր կազմակերպության հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները դուրս են գրվել 2023թ.-ին:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկերի անփոփ նկարագրությունը ստորև՝

| *Հազար դրամ* | Հետաձգված հարկային ակտիվ/(պար-տավորություն) 2023թ. հունվարի 1-ի դրությամբ | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ արդյունքում զուտ ճանաչում՝ կապված Ռուսական դուստր ընկերության հետ | Ռուսական դուստր ընկերության շահույթում կամ վնասում ճանաչված հետաձգված հարկի դուրսգրում | Հետաձգված հարկային ակտիվ/(պար-տավորություն) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,680 | (2,344) | – | – | 336 |
| Չավարտված գործարքներ | 2,639 | (2,575) | – | – | 64 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 43,603 | 2,061 | (14,808) | (26,532) | 4,324 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (4,165) | 2,081 | – | – | (2,084) |
| Այլ պարտավորություններ | 55,932 | 17,028 | – | – | 72,960 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 4,638 | (2,161) | – | – | 2,477 |
| Հարկային վնաս | 76,088 | 1,139 | (27,868) | (49,359) | – |
| Արտարժույթի վերահաշվարկման զուտ տարբերություններ | (13,268) | – | 25,161 | (11,893) | – |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ** | **168,147** | **15,229** | **(17,515)** | **(87,784)** | **78,077** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 8 Շահութահարկ (շարունակություն)

| *Հազար դրամ* | Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն) 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված | Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն) 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,145 | (535) | – | 2,680 |
| Չավարտված գործարքներ | 5,479 | (2,840) | – | 2,639 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 21,717 | 21,886 | – | 43,603 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (6,584) | 2,419 | – | (4,165) |
| Այլ պարտավորություններ | 20,360 | 35,572 | – | 55,932 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 7,076 | (2,438) | – | 4,638 |
| Հարկային վնաս | 44,115 | 31,973 | – | 76,088 |
| Արտարժույթի վերահաշվարկման զուտ տարբերություններ | (1,555) | - | (11,713) | (13,268) |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ** | **168,147** | **87,107** | **(11,713)** | **168,147** |

## 9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ

| *Հազար դրամ* | 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր* | 1,297,418 | 1,116,059 |
| ԱՊԿ պահուստ | (24,012) | (12,756) |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **1,273,406** | **1,103,303** |
| Տրված կանխավճարներ | 184,883 | 168,221 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 10,508 | 10,165 |
| **Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ** | **195,391** | **178,386** |
| **Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ** | **1,468,797** | **1,281,689** |

* Առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են հաճախորդների հետ պայմանագրերից հաշվեգրված հասույթից՝ ստացվելիք իրավաբանական անձանցից: Իրավաբանական անձանցից հասույթի համար տե՛ս Ծան. 3:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: 2023թ. և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց առևտրային դեբիտորական պարտքեր չկան:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

## 10 Կապիտալ և պահուստներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետերեր են հանդիսանում «Դիջիթալ Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ-ն և ԱյԴի Բանկ ՓԲԸ-ն համապատասխանաբար 76% և 24% բաժնեմասնակցությամբ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի միակ բաժնետեր է հանդիսացել «Դիջիթալ Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ-ն:

*(հազար ՀՀ դրամ)*

## 10 Կապիտալ և պահուստներ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 480,850 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31՝ 365,446 հազար դրամ):

2023 թվականին ԱյԴի Բանկը 7,000,000 հազար ՀՀ դրամ կանխիկ ներդրմամբ ձեռք է բերել Իդրամ ՍՊԸ կանոնադրական կապիտալի 24%-ը, որից 115,404 հազար դրամը կազմել է կանոնադրական կապիտալի ավելացում, իսկ 6,884,596 հազար ՀՀ դրամը հաշվառվել է համապատասխանաբար որպես լրացուցիչ վճարված կապիտալ:

2023 թվականին Խումբը հայտարարել է շահաբաժիններ Մայր ընկերությանը և չվերահսկվող բաժնեմասին՝ համապատասխանաբար 4,800,000 հազար ՀՀ դրամ և 122,938 հազար ՀՀ դրամ (2022 թ.՝ 3,200,000 ՀՀ դրամ և 42,550 հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար Մայր ընկերությանը և չվերահսկվող բաժնեմասին): 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 37,938 ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2022 թ.՝ 1,100,000 հազար ՀՀ դրամ) չմարված շահաբաժինների պարտավորություն (Ծանոթագրություն 12):

## 11 Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| Օնլայն վճարահաշվարկային գործառնություններ | 3,467,187 | 2,347,329 |
| Օֆլայն վճարահաշվարկային գործառնություններ | 1,917,642 | 1,385,709 |
| Ստացված կանխավճարներ վճարահաշվարկային գործառնություններ մատուցելու համար | 1,551,254 | 4,087,797 |
| Այլ | 174,514 | 116,711 |
| **Ընդամենը պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով** | **7,110,597** | **7,937,546** |

Վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերը առաջանում են ֆիզիկական անձանցից վճարումների հավաքագրումից գործընկեր ընկերություններին փոխանցելու համար՝ միջինում 1-3 աշխատանքային օրվա ընթացքում (սակայն կարող են տարբեր լինել որոշ գործընկերների հետ համաձայնագրերի համաձայն), որոնց կատարվել են այդ վճարումները: Ֆիզիկական անձանց կողմից իրականացված վճարումները արտացոլվում են որպես Խմբի պարտավորություն վճարումը սկսելու պահին, որից հետո Խումբը այդ հավաքագրված վճարումները փոխանցում է գործընկեր ընկերություններին:

Վճարահաշվարկային գործառնությունների գծով պարտքերից տոկոսներ չեն գանձվում:

## 12 Այլ պարտքեր

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| *Ֆինանսական* | | |
| Հաշվեգրումներ | 405,352 | 310,735 |
| Վճարվելիք շահաբաժիններ | 37,938 | 1,100,000 |
| Անձնակազմի գծով կարճաժամկետ պարտավորություններ | 17,180 | 32,632 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 13,763 | 25,767 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 63,095 | 18,304 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտքեր** | **537,328** | **1,487,438** |
| *Ոչ ֆինանսական* | | |
| Հարկեր, բացառությամբ շահութահարկի | 56,195 | 47,372 |
| Այլ պարտավորություններ | 27,140 | 24,780 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտքեր** | **83,335** | **72,152** |
| **Ընդամենը այլ պարտքեր** | **620,663** | **1,559,590** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 13 Մատուցված ծառայություններից եկամուտ

| *Հազար դրամ* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Վճարահաշվարկային գործառնությունների համար միջնորդավճար իրավաբանական անձանցից | 6,943,397 | 8,362,419 |
| Քարտերին փոխանցումների համար եկամուտ ֆիզիկական անձանցից | 1,200,251 | 1,130,242 |
| Վճարահաշվարկային գործառնությունների համար միջնորդավճար ֆիզիկական անձանցից | 1,199,606 | 594,954 |
| QR վճարումների համար միջնորդավճար իրավաբանական անձանցից | 343,731 | 268,333 |
| IDPay վճարային հարթակի համար միջնորդավճարների տեսքով եկամուտ | 226,205 | 126,354 |
| Ներքին փոխանցումների համար վճարներ | 34,643 | 44,342 |
| Այլ եկամուտ իրավաբանական անձանցից | 108,517 | 78,545 |
| Գովազդային ծառայություններ | – | 26,294 |
| **Ընդամենը մատուցված ծառայություններից եկամուտ** | **10,056,350** | **10,631,483** |
| - որից Հայաստանում | 9,830,145 | 10,505,129 |
| - որից Ռուսաստանում | 226,205 | 126,354 |

## 14 Այլ վարչական ծախսեր

| *Հազար դրամ* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Մարկետինգի և գովազդի գծով ծախսեր | 542,931 | 364,798 |
| SS սպասարկման ծախսեր | 180,000 | 108,000 |
| Հաճախորդների նույնականացման ծախսեր | 98,674 | 125,882 |
| Գրասենյակային ծախսեր | 91,780 | 89,288 |
| Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր | 73,180 | 26,132 |
| Բարեգործական ծախսեր | 43,610 | 27,027 |
| Բանկային և ապահովագրական ծախսեր | 35,564 | 28,925 |
| Այլ ծախսեր | 244,431 | 282,776 |
| **Ընդամենը վարչական և այլ ծախսեր** | **1,310,170** | **1,052,828** |

## 15 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

| *Հազար դրամ* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Բանկային ավանդներից և բանկային հաշիվներից | 496,529 | 293,027 |
| **Ընդամենը ֆինանսական եկամուտ** | **496,529** | **293,027** |
| Բանկերից վարկերի գծով | (32,893) | (106,538) |
| Վարձակալության պարտավորությունների գծով | (1,724) | (5,333) |
| **Ընդամենը ֆինանսական ծախսեր** | **(34,617)** | **(111,871)** |
| **Զուտ ֆինանսական եկամուտ** | **461,912** | **181,156** |

## 16 Ակնկալվող պարտքային կորուստների գծով (հակադարձում)/կորուստ

| *Հազար դրամ* | 2023 | 2022 |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծան. 4) | (26,519) | (12,354) |
| Ավանդներ բանկերում (Ծան. 5) | (610) | (1,259) |
| Առևտրային դեբիտորական պարտքեր (Ծան. 9) | 18,390 | 18,777 |
| Այլ | – | 18,067 |
| | **(8,739)** | **23,231** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 17 Արտարժութային գործառնություններից եկամուտ, զուտ

| *Հազար դրամ* | **2023** | **2022** |
|---|---|---|
| Փոխաժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս) | (104,030) | 4,316 |
| Արտարժույթի փոխարկումից զուտ իրացված օգուտներ | 432,561 | 289,569 |
| **Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից** | **328,531** | **293,885** |

## 18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են խելամիտ:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է նշանակալի ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Գուդվիլի արժեզրկում*

Գուդվիլը ճանաչվել է «Իդրամ Տերմինալս» ՍՊԸ-ում բաժնեմասի գնման պահին: Վերջինիս հիմնական գործունեությունը Մայր Ընկերությանը տերմինալների վարձակալությամբ տրամադրումն է և դրանց սպասարկումը:

Խումբը տարեկան կտրվածքով դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացնում է գուդվիլի հետ կապված դրամաստեղծ միավորների արժեզրկման ստուգում, կամ ավելի հաճախ, եթե կա հայտանիշ, որ գուդվիլն արժեզրկված է:

Գուդվիլի արժեզրկման ստուգման համար օգտագործվող գնահատման մոդելը օգտագործման արժեքի մոդելն է (VIU) հետևյալ տվյալներով՝ զեղչման տոկոսադրույքը 21%, վերջնական աճի տեմպը 4% և բյուջեի կանխատեսման ժամկետը 5 տարի՝ սկսած 2023 թվականի դեկտեմբերի 31-ից:

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն իր իրական արժեքից՝ հանած օտարման ծախսերը և օգտագործման արժեքի մեծությունների առավելագույնն է:

Արդյունքում, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի և 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գուդվիլը արժեզրկված չէ: Գուդվիլը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի և 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 184,285 հազար դրամ:

## 19 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

*Արտարժութային ռիսկ*

Խումբն իրականացնում է գործարքներ արտարժույթով: Հետևաբար այն ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի 20% (2022թ.՝ 20%) աճին/նվազմանը: 20%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 20%-ով:

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլիի նկատմամբ 20%-ով կունենա հետևյալ ազդեցությունը:

| | **ԱՄՆ դոլարի ազդեցություն** | | **Եվրոյի ազդեցություն** | | **Ռուբլու ազդեցություն** | |
|---|---|---|---|---|---|---|
| *Հազար դրամ* | **2023** | **2022** | **2023** | **2022** | **2023** | **2022** |
| Շահույթ | 89,681 | 27,030 | 257 | – | 86,092 | 18,842 |
| Սեփական կապիտալ | 89,681 | 27,030 | 257 | – | 86,092 | 18,842 |

*Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Խմբի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունների գծով գնահատվել է ոչ էական:

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ գործընկերը չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները և առևտրային դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է համապատասխան ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով, որը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 19,594,707 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,265,779 հազար դրամ): ԱյԴի Բանկից ռիսկերի կենտրոնացման համար տե՛ս 21-րդ ծանոթագրությունը Կապակցված կողմեր:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ֆինանսական ռիսկի գործոններ (շարունակություն)

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է բանկային ավանդների դիվերսիֆիկացիայի և դրանք տարբեր բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքերի որակը: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին պարտքային վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի վերցնում:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը չի կարողանա կատարել իր վճարման պարտավորությունները, երբ դրանք դառնան մարման ենթակա սովորական և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկը մեղմելու համար ղեկավարությունը կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով դրանց իրացվելիության մակարդակը, ժամանակ առ ժամանակ վերահսկում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանների առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան, այն է՝ բարձր իրացվելի ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների միջև հարաբերակցություն: Այս հարաբերակցությունը էլեկտրոնային փող թողարկող վճարահաշվարկային կազմակերպությունների համար պետք է կազմի 100 տոկոս:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Մայր Ընկերությունը պահպանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելության նորմատիվ պահանջները: Մայր Ընկերությունը չի ունեցել այդ պահանջների խախտումներ:

| | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %** |
|---|---|---|
| Բարձր իրացվելի ակտիվներ/ ցպահանջ պարտավորություններ | 191 | 126 |

Ֆինանսավորման գործունեությունից բխող Խմբի պարտավորությունների փոփոխությունները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

| *Հազար դրամ* | **Բանկերից վարկեր** | **Վարձակալու-թյան գծով պարտավորու-թյուններ** | **Վճարվելիք շահաբաժիններ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեք** | 487,192 | 25,767 | 1,100,000 | 1,612,959 |
| Վճարումներ | (487,192) | (13,728) | (5,985,000) | (6,485,920) |
| Այլ | - | 1,724 | 4,922,938 | 4,924,662 |
| **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեք** | **–** | **13,763** | **37,938** | **51,701** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ֆինանսական ռիսկի գործոններ (շարունակություն)

| *Հազար դրամ* | **Բանկերից վարկեր** | **Վարձակալու-թյան գծով պարտավորու-թյուններ** | **Վճարվելիք շահաբաժիններ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեք** | 788,776 | 39,313 | – | 828,089 |
| Ավելացումներ | 299,955 | 29,825 | | 329,780 |
| Վճարումներ | (707,349) | (48,704) | (2,142,550) | (2,898,603) |
| Այլ | 105,810 | 5,333 | 3,242,550 | 3,353,693 |
| **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեք** | **487,192** | **25,767** | **1,100,000** | **1,612,959** |

«Այլ» վերնագիրը ներառում է վարձակալության նոր ձևավորված պարտավորությունները և վարձակալության վերանայումները, որոնք անկանխիկ շարժեր են: Այն ներառում է նաև բանկերից ստացված վարկերի և վարձակալական պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռ չվճարված տոկոսները, հայտարարված շահաբաժինները: Խումբը տոկոսների վճարները դասակարգում է որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն:

2023թ. դեկտեմբերի 31

| *Հազար դրամ* | **Մինչև 1 ամիս** | **1 - 12 ամիս** | **1-5 տարի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | |
| Պարտքեր հաճախորդներին էլեկտրոնային փողի գծով | 2,067,195 | – | – | **2,067,195** |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 7,110,597 | – | – | **7,110,597** |
| Այլ պարտքեր (բացառությամբ վարձակալության) | 244,250 | 141,411 | 137,904 | **523,565** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,144 | 12,584 | – | **13,728** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **9,423,186** | **153,995** | **137,904** | **9,715,085** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ֆինանսական ռիսկի գործոններ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31

| *Հազար դրամ* | **Մինչև 1 ամիս** | **1 - 12 ամիս** | **1-5 տարի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | |
| Վարկեր բանկերից | 19,592 | 215,507 | 313,465 | **548,564** |
| Պարտքեր հաճախորդներին էլեկտրոնային փողի գծով | 1,665,592 | – | – | **1,665,592** |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 7,937,546 | – | – | **7,937,546** |
| Այլ պարտքեր (բացառությամբ վարձակալության) | 188,107 | 1,200,814 | 72,750 | **1,461,671** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,144 | 12,584 | 13,728 | **27,456** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **9,811,981** | **1,428,905** | **399,943** | **11,640,829** |

*(դ) Ժամկետայնության ռիսկ*

Ստորև ներկայացվում է 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ ժամկետայնության:

2023թ. դեկտեմբերի 31

| *Հազար դրամ* | **Մինչև 1 տարի** | **Ավելի քան 1 տարի** | **Անժամկետ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 16,781,018 | – | – | **16,781,018** |
| Ավանդներ բանկերում | 1,499,915 | 40,368 | – | **1,540,283** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ | 1,468,797 | – | – | **1,468,797** |
| Հետաձգված հարկային ակտիվներ | – | – | 78,076 | **78,076** |
| Հիմնական միջոցներ | – | – | 385,040 | **385,040** |
| Ոչ նյութական ակտիվներ | – | – | 794,909 | **794,909** |
| Գուդվիլ | – | – | 184,285 | **184,285** |
| Այլ ակտիվներ | – | – | 2,590 | **2,590** |
| **Ընդամենը ակտիվներ** | **19,749,730** | **40,368** | **1,444,900** | **21,234,998** |
| | | | | |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | | | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով | 2,067,195 | – | – | **2,067,195** |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 7,110,597 | – | – | **7,110,597** |
| Այլ պարտքեր | 482,759 | 137,904 | – | **620,663** |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | 584,166 | – | – | **584,166** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **10,244,717** | **137,904** | **–** | **10,382,621** |
| **Զուտ դիրք** | **9,505,013** | **(97,536)** | **1,444,900** | **10,852,377** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ֆինանսական ռիսկի գործոններ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31

| *Հազար դրամ* | Մինչև 1 տարի | Ավելի քան 1 տարի | Անժամկետ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15,043,508 | – | – | **15,043,508** |
| Ավանդներ բանկերում | 118,968 | – | – | **118,968** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ | 1,281,689 | – | – | **1,281,689** |
| Հետաձգված հարկային ակտիվներ | - | – | 168,147 | **168,147** |
| Հիմնական միջոցներ | - | – | 400,933 | **400,933** |
| Ոչ նյութական ակտիվներ | - | – | 702,908 | **702,908** |
| Գուդվիլ | - | – | 184,285 | **184,285** |
| **Ընդամենը ակտիվներ** | **16,444,165** | **–** | **1,456,273** | **17,900,438** |
| | | | | |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | | | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Վարկեր բանկերից | 173,727 | 313,465 | – | **487,192** |
| Պարտքեր հաճախորդներին Էլեկտրոնային փողի գծով | 1,665,592 | – | – | **1,665,592** |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 7,937,546 | – | – | **7,937,546** |
| Այլ պարտքեր | 1,486,840 | 72,750 | – | **1,559,590** |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | 930,403 | – | – | **930,403** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,194,108** | **386,215** | **–** | **12,580,323** |
| **Զուտ դիրք** | **4,250,057** | **(386,215)** | **1,456,273** | **5,320,115** |

*(դ) Իրական արժեքի չափում*

Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից, քանի որ դրանք հիմնականում կարճաժամկետ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ են:

## 20 Պայմանականություններ

*Ապահովագրություն*

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են աշխարհի այլ մասերում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կամ շրջակա միջավայրի վնասը կարող են անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

*(հազար ՀՀ դրամ)*

## 20 Պայմանականություններ (շարունակություն)

*Հարկում և դատական վարույթներ*

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, պաշտոնական հայտարարություններով և դատական վճիռներով, որոնք հաճախ ոչ պարզ են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք ունեն տույժեր և տուգանքներ առաջադրելու իրավասություն: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տույժերի գծով պարտավորություններ չեն կարող գանձվել խախտման օրվանից երեք տարին լրանալուց հետո:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և իրենց մեկնաբանությունները հաջողությամբ առաջ քաշելու դեպքում դրանց ազդեցությունը հետևյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է զգալի լինել:

Ղեկավարության համոզմամբ, Խումբը պահպանել է բոլոր նորմատիվները և ամբողջությամբ մարել է իր հարկային պարտավորությունները:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ներգրավված չի եղել իր դեմ որևէ դատական վարույթում: Հետևաբար, Խումբը չունի համապատասխան պահուստ նմանատիպ հարկային և դատական հարցերի մասով:

## 21 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են Խմբի բաժնետերերը, հիմնական ղեկավար անձնակազմը և Խմբին անչվող այլ ընկերություններ: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատկանում է «Դիջիթալ Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ-ին (76%) և ԱյԴի Բանկ ՓԲԸ-ին (24%), որոնք իրենց հերթին 100% պատկանում են ԱյԴի Գրուփ ՓԲԸ-ին: Խմբի վերջնական մայր ընկերությունն է «Դրիվելիո Հոլդինգս Լիմիթեդ»-ը, որի իրական շահառու է հանդիսանում Լալա Բախշեցյանը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատկանում է Դիջիթալ Հոլդինգս Լիմիթեդ ՍՊԸ-ին, որի վերջնական հսկող անձ է հանդիսանում Լալա Բախշեցյանը:

2023 թվականին Խումբը հայտարարել է 4,922,938 հազար դրամ շահաբաժիններ (2022թ.՝ 3,242,550 հազար դրամ):

*Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ընտանիքի անդամների հետ*

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի տնօրենները և նրանց անմիջական ընտանիքի անդամները Խմբում մասնակցություն չեն ունեցել:

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում և ներկայացնում է կարճաժամկետ օգուտներ.

| *Հազար դրամ* | **2023** | **2022** |
|---|---|---|
| Անձնակազմի գծով ծախսեր | 496,536 | 436,108 |
| | **496,536** | **436,108** |

Կապակցված կողմերի գործարքների հետ կապված 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդները և շահույթի կամ վնասի գումարները ներկայացված են ստորև: ԱյԴի բանկը Խմբի կապակցված կողմ է դարձել 2023 թվականի ընթացքում (նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր):

*(հազար ՀՀ դրամ)*

## 21 Կապակցված կողմեր (շարունակություն)

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|
| | **Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 12,122,534 |
| Ավանդներ բանկերում | 1,540,497 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 158,440 |
| Պարտքեր վճարահաշվարկային գործառնությունների գծով | 2,014,412 |

| *Հազար դրամ* | **2023թ.** |
|---|---|
| | **Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր** |
| Մատուցված ծառայություններից հասույթ | 861,104 |
| Կոմիսիոն վճարների տեսքով ծախսեր | 1,289,438 |
| Ֆինանսական եկամուտ | 241,915 |
| Ֆինանսական ծախսեր | 6,757 |

## 22 Կապիտալի համարժեքություն

Մայր ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բիզնեսին բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Մայր ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոններով և նորմատիվներով:

ՀՀ կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 100,000 հազար դրամի չափով:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը (ընդ որում, կանոնադրական կապիտալի ոչ նյութական ակտիվներով համալրված մասը ընդհանուր կապիտալի հաշվարկին մասնակցում է ոչ ավել քան 100,000 հազար դրամի 25 տոկոսի չափով), չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

| *Հազար դրամ* | **2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| Հիմնական կապիտալ | 1,112,979 | 821,503 |
| **Ընդամենը՝ նորմատիվային կապիտալ** | **1,112,979** | **821,503** |

Ժամանակաշրջանի ընթացքում Խումբը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները: